## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 08.04.2022թ. N 197/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.04.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղարիբջանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Շ.Առաքելյանը, Հ.Վանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**Օրակարգ**

***Հայտերի բացման և գնահատման մասին***

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Ղարիբջանյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Կուրղինյան-23, բն.39)

2" ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ ԱՁ (ք. Երևան, Դավիթաշեն 1 թղմ.2/23/42)

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Հ/Հ | Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Ապրանքի անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | նախահաշվային ընդհանուր գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱՀ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ | Թուղթ A4 ֆորմատի | 37 240 000 | 20% | 44 688 000 | **44 700 000** |
| 2 | | ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ ԱՁ | | 447 00 000 | 0% | 447 00 000 | |

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. Առաջին տեղը զբաղեցրած «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթեր, սակայն «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ն չի ներկայացրել հրավերով նախատեսված հայտի ապահովումը, ինչպես նաև չի ներկայացրել իր կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

2. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակցի հայտը մերժել:

**5. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

-Նիստը վերսկսել՝ 2022 թվականի ապրիլի 22-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղարիբջանյան

Անդամներ՝ Շ.Առաքելյան

Հ.Վանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան